

Ստոմատոլոգիական հիվանդությունների կանխարգելիչ միջոցների օգտագործման արդյունքները

Մ.Մ.Մարգարյան, Ի.Ֆ.Վարդանյան

Երևանի Մ.Հերացու անվ. Պետական բժշկական համալսարանի ստոմատոլոգիական հիվանդությունների կանխարգելման և մանկական ստոմատոլոգիայի ամբիոն

375025 Երևան, Կորյունի 2

Բանալի բառեր. կանխարգելում, կարիես, պարոդոնտի հիվանդություններ

Ստոմատոլոգիական օգնության կատարելագործումը առողջապահության կարևոր խնդիրներից մեկն է: Ստոմատոլոգիական հիվանդությունների կառուցվածքի մեջ բոլոր տարիքային խմբերում գերակշռող են մնում կարիեսը և պարոդոնտի հիվանդությունները:

Ներկայումս՝ առողջապահության ամբարվարաբ ֆինանսավորման պայմաններում, կտրուկ բարձրացում է ստոմատոլոգիական հիվանդությունների կանխարգելման դերը, որի ներդրումը թույլ է տալիս զգալի կերպով պահպանել երեխաների և մեծահասակների բերանի խոռոչի առողջությունը:

Չանգվածային զուվագրների առկայությունը և հիգիենայի միջոցների բազմազանությունը ստիպում է մասնագետներին կատարել ավելի մանրակրկիտ կլինիկական հետազոտություններ՝ դրանց արդյունավետության և որակի վերլուծության և գնահատման նպատակով [2]: Շատ տարբեր են մալ կանխարգելիչ միջոցների արդյունավետության գնահատման չափանիշները:

Տվյալ հետազոտության նպատակն էր որոշակի ատամնամածուկների կանխարգելիչ ազդեցության արդյունավետության, բերանի խոռոչի հիգիենայի և պարոդոնտի հյուսվածքների վիճակի գնահատման

ցուցանիշների տարբեր համակցումների տեղեկատվականության որոշումը [1]:

Նյութը և մեթոդները

Կատարվել է 200 հոգու համալիր կլինիկական ստոմատոլոգիական հետազոտություն, որոնցից 120-ը ԵրԴՀ-ի 18-20 տարեկան ուսանողներ էին, 80-ը՝ Երևանի միջնակարգ դպրոցների 6-12 տարեկան աշակերտներ:

Որոշվել է.

1. ատամների կարիեսի հաճախականությունը ըստ ԿՊՀ ցուցանիշի,
2. պարոդոնտի հյուսվածքների վիճակը՝ PMA, GI և CPI ցուցանիշներով,
3. բերանի խոռոչի հիգիենայի վիճակը՝ OHI-S և PHP ցուցանիշներով:

Հետազոտության սկզբում բոլոր մասնակիցներին ուսուցանել են բերանի խոռոչի հիգիենայի ճիշտ կանոնները և անցկացվել է մասնագիտական հիգիենա [4]:

Աղյուսակ 1

Երիտասարդների բաշխումը ըստ ատամնամածուկների օգտագործման

Խումբ	Մասնակիցների թիվը	Ատամնամածուկի մոդել, N	Ատամնամածուկի ակտիվ բաղադրիչները
A	25	1	եղեսպակ, երիցուկ, քրթնջախտո դեղատնային, ամանուխ, հղկող մյուր՝ դեհիդրատացված սիլիցիումի երկօքսիդ
B	25	2	քլորֆիլ, կարտին, կարտինոիդներ, վիտամիններ C և D, հղկող մյուր՝ կալցիումի կարբոնատ և սիլիցիումի երկօքսիդ
C	10	3(հսկիչ)	հիգիենիկ ատամնամածուկ առանց ակտիվ բաղադրիչների, հղկող մյուր՝ դիկալցիֆոսֆատ
D	25	4	0.2% քլորհեքսիդին, հղկող մյուր՝ սիլիցիումի երկօքսիդ
E	25	5	0.2% հիդրոքսիապատիտ, հղկող մյուր՝ սիլիցիումի երկօքսիդ
F	10	6(հսկիչ)	հիգիենիկ ատամնամածուկ առանց ակտիվ բաղադրիչների, հղկող մյուր՝ սիլիցիումի երկօքսիդ

Երեխաների բաշխումը ըստ ատամնամածուկների օգտագործման

Խումբ	Մասնակիցների թիվը	Ատամնամածուկի մոդել N	Ատամնամածուկի ակտիվ բաղադրիչները
K	30	7	Մատրիումի ֆլյուորիդ, եռմատրիում ֆոսֆատ, հղկող նյութ՝ դեհիդրատացված սիլիցիումի երկօքսիդ
L	30	8	0.2% մատրիումի ֆտորիդ, 0.2% հիդրոքսիապատիտ, եղկող նյութ՝ դեհիդրատացված սիլիցիումի երկօքսիդ
M	20	9(հսկիչ)	հիգիենիկ ատամնամածուկ առանց ակտիվ բաղադրիչների, հղկող նյութ՝ դիկայցիֆոսֆատ

Հետազոտության մասնակիցները ըստ կանխարգելիչ նյութերի օգտագործման բաժանվել են խմբերի (աղ. 1,2):


Երկու ամսվա ընթացքում A և B խմբերի մասնակիցները օգտագործել են ատամնամածուկներ, որոնք պարունակում էին տարբեր դեղաբույսերի հավաքածուներ, D և E խմբերի մասնակիցները օգտագործել են տարբեր դեղամիջոցներով ատամնամածուկներ: Դպրոցականները 6 ամսվա ընթացքում օգտագործել են տարբեր հակակարիոգ բաղադրիչներով (K, L) ատամնամածուկներ:

Համապատասխան հսկիչ խմբերում օգտագործվել են մոլյուստիպ ատամնամածուկներ առանց կենսաբանական ակտիվ նյութերի:


Մուրթումը 6 տարեկան երեխաների մոտ կազմում էր՝ 5.83, 12 տարեկանների մոտ՝ 4.3, 18 տարեկանների մոտ՝ 4.9, 20 տարեկանների մոտ՝ 5.8: Կարիեսի տարածվածությունը հասնում էր 98%: Պարոդոնտի հյուսվածքների վիճակը երեխաների մոտ՝ ըստ Parma PMA ցուցանիշի, համապատասխանում էր 6 տարեկանների մոտ «թեթև գինգիվիտ» չափանիշին, 12 տարեկանների մոտ՝ «թեթև և միջին աստիճանի գինգիվիտ»-ի (25-52%), 18-20 տարեկան պարոդոնտի հյուսվածքների վիճակը՝ ըստ PMA ցուցանիշի համապատասխանում էր «թեթև գինգիվիտ», ըստ GI ցուցանիշի՝ «միջին ծանրության գինգիվիտ»-ի: CPITN ցուցանիշի համաձայն պարոդոնտի հյուսվածքների ախտահարումները հասնում էին 100%, ինտակտ սերատանտների քանակությունը տատանվում էր 0.9-1.2, արյունահոսությունը սերատանտների թիվը՝ 1.8-2.4, ատամնաքարերով սերատանտների թիվը՝ 2.2-2.6, 4-5 մմ պարոդոնտալ գրպանիկներով սերատանտների քանակը՝ 0.05(մկ. 1,2):

Աղյուսակները և նրանց քննարկումը

Հետազոտության սկզբում կարիեսի հաճախակա-



Նկար 1. Կարիեսի հաճախականությունը



Նկար 2. Պարոդոնտի հյուսվածքների ախտահարումները

Բերանի խոռոչի հիգիենայի ելակետային վիճակը ըստ Գրին-Վերմիլիոնի ցուցանիշի համապատասխանում էր «բավարար» մակարդակին (1.78-2.01), իսկ ըստ Phosphadley PHP ցուցանիշի համապատասխանում էր «ամբարավար» մակարդակին (3.2-3.4):

Այսպիսով, ելակետային ստոմատոլոգիական հետազոտության տվյալները վկայում էին երեխաների և երիտասարդների ատամների կարիեսի և պարոդոնտի հիվանդությունների բարձր տարածվածության մասին, ընդ որում նկատվում էր հիվանդությունների ինտենսիվության բարձրացում և բերանի խոռոչի հիգիենայի վիճակի վատացում տարիքի հետ:

Հակաբորբոքային ատամնամածուկների օգտագործման արդյունքները ցույց տվեցին, որ տարբեր դեղաբույսերի համալիր պարունակությամբ մածուկների մաքրող հատկությունները ավելի բարձր են, քան բուժական բաղադրիչներով մածուկներին՝ ի հաշիվ դեղաբույսերի արտահայտված ազդեցությանը ատամնափառի մանրէների կենսունակության վրա: Դեղաբույսերով մածուկների երկու ամսվա օգտագործման ընթացքում նրանց մաքրող արդյունավետությունը կազմեց 45.6%:

Բուժիչ բաղադրամասերով ատամնամածուկների մեջ առավել բարձր մաքրող հատկություններով էր օժտված քլորհեքսիդինի 0.2% լուծույթ պարունակող ատամնամածուկը, որի մաքրման արդյունավետությունը հասնում էր 40.2%-ի: Բացի այդ պարզվեց, որ բոլոր հետազոտված ատամնամածուկները, անկախ պարունակող կենսաբանական ակտիվ նյութերից, ունեն դրական ազդեցություն պարոդոնտի հյուսվածքների վրա: Դեղաբույսերով ատամնամածուկների օգտագործման արդյունքում բորբոքային երևույթների արտահայտվածությունը իջավ մինչև 55.7%: Դեղամիջոցներով ատամնամածուկների օգտագործման ժամանակ մույնպես դիտվում էր բորբոքային երևույթների նվազում, և առավել բարձր դրական արդյունք նկատվել է քլորհեքսիդին պարունակող ատամնամածուկների օգտագործման դեպքում:

CPITN ցուցանիշի բաղադրյալների փոփոխությունը մույնպես խոսում է արյունահոսության նվազման հետևանքով պարոդոնտի հյուսվածքների վիճակի բարելավման մասին:

Հակակարիոգ ազդեցությամբ ատամնամածուկների բուժ-կանխարգելիչ հատկությունների ուսումնասիրության արդյունքները ցույց տվեցին, որ նրանք օժտված են ավելի արտահայտված մաքրող հատկություններով, քան համապատասխան հսկիչ մուշ-ները: Առավել արտահայտված մաքրող հատկություն-

ներ ունեն մատրիումի ֆտորիդ և հիդրօքսիապատիտ պարունակող ատամնամածուկը, որի մաքրող հատկությունը 6 ամիսների ընթացքում հասնում է 37.8%-ի [1]:

Հակակարիոգ ազդեցությամբ ատամնամածուկի օգտագործումը 6 ամսվա ընթացքում բերել է կարիեսի հաճախականության հավաստի իջեցմանը, ապակրակալման օջախների չափսերի փոփոխությանը, որը վկայում է ռեմիներալիզացման պրոցեսների ակտիվացման մասին:

Հիգիենիկ և պարոդոնտալ ցուցանիշների տեղեկատվականության տարբերությունը պայմանավորված էր ինչպես պարոդոնտի հյուսվածքների և բերանի խոռոչի հիգիենայի ելակետային վիճակի մակարդակի, այնպես էլ կանխարգելման միջոցների կլինիկական արդյունավետության գնահատման տարբերությամբ:

Կանխարգելիչ միջոցառումների անցկացումը նպաստում էր հիգիենիկ ցուցանիշների հավաստի իջեցմանը, բայց ոչ միշտ էր բերում գնահատման չափանիշների փոփոխմանը:

Այսպիսով, հետազոտությունը ի հայտ բերեց ատամների կարիեսի բարձր հաճախականություն հետազոտվածների բոլոր խմբերում, որը տարիքի հետ բարձրանում էր: Պարոդոնտի հիվանդությունների տարածվածությունը հասնում էր 100%, ախտահարման հաճախականությունը կազմել էր արյունահոսությամբ՝ 1.8-2.4, ատամնաքայտով՝ 2.2-2.6 սեքստանտ: Բերանի խոռոչի հիգիենայի վիճակը ամբարավար էր ինչպես երեխաների, այնպես և երիտասարդների մոտ:

Հակակարիոգ ատամնամածուկների գործածումը բերում է սկզբնական կարիեսի հաճախականության իջեցմանը, կենսաբանական ակտիվ նյութեր պարունակող ատամնամածուկների գործածումը բարելավում է բերանի խոռոչի հիգիենան և նպաստում պարոդոնտի հյուսվածքների բորբոքային երևույթների նվազեցմանը:

Ելնելով ստացված արդյունքներից, մենք խորհուրդ ենք տալիս երիտասարդներին օգտագործել որպես բուժ-կանխարգելիչ միջոցներ հակաբորբոքային ազդեցությամբ, իսկ երեխաներին՝ հակակարիոգ բաղադրիչներով ատամնամածուկներ: Օգտագործված բոլոր ցուցանիշները կարելի է խորհուրդ տալ գործածել ստոմատոլոգիական հետազոտությունների անցկացման համար տարիքային տարբեր խմբերում:

Поступила 12.01.04

Результаты использования профилактических средств стоматологических заболеваний

М.М.Маркарян, И.Ф.Варданян

В статье авторы обсуждают данные стоматологического обследования, включающего сопоставление информативности различных индексов гигиены полости рта и забо-

леаний пародонта, а также результаты профилактического воздействия некоторых зубных паст и оценивают их эффективность.

The results of using preventive means of stomatological diseases

M.M.Markarian, I.F.Vardanian

In the article the authors discuss the results of stomatological clinical study of various oral hygiene and periodontal indices and the results of preventive influence of

various kinds of tooth paste, and evaluate their effectiveness.

Գրականություն

1. Козичева Т.А., Васина С.А., Беля В.Н. Информативность индексов гигиены полости рта при применении средств профилактики, Международная научно-практическая конференция «Новые технологии в стоматологии», М., 1998, с. 14.
2. Федоров Ю.А., Дрожжина В.А. и соавт.

3. Колесник А.Г. Стоматология для всех, 1998, 2(3), с. 23.
4. Хохрина Т.Г. Клиническая стоматология, с. 14.

Стоматология детского возраста и профилактика, М., 2002, 1-2, с. 12.